«Հայաստանի Անմահ գունդ»
հայրենասիրական հասարակական կազմակերպություն
«Бессмертный Полк Армении»
Патриотическая Общественная Организация
"Immortal Regiment of Armenia"
Patriotic Public Organization

0033,Армения, г. Ереван, ул. Ав. Аветисяна 4, кв. 21
тел. (+37491) 818882 e-mail: armpolk@gmail.com

№ 83
«20» 04 2018թ.

Երևանի քաղաքապետ
Պարոն Հ. Մարությանին

Հարգելի պարոն Մարության,

«Հայաստանի Անմահ գունդ» հայրենասիրական հասարակական կազմակերպությունը՝ ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ, մեր փառահեղ հաղթանակների օրվա՝ եռատոնի խորհուրդն և դրա վերաբերյալ հիշողությունները սերունդներին փոխանցելու նպատակով ս.թ. մայիսի 9-ին Երևանում անցկացնելու է «Անմահ գունդ» խորագրով քայլերթ:

Ակցիան մեկնարկելու է մայիսի 9-ին՝ ժամը 13:00-ին, Երևանի Արամ Խաչատրյանի հուշարձանի մոտից: Քայլերթի մասնակիցներն, ինչպես նախորդ տարիներին, իրենց հետ տանելու են Հայրենական Մեծ պատերազմի, Արցախյան ազատամարտի և ապրիլյան քառօրյա պատերազմի հերոսների նկարները, ՀՀ դրոշներ, օգտագործվելու է բարցրախոս: Մասնակիցների թիվը՝ 5 000 և ավելի:

Ակցիային մասնակցելու են ՀՀ ուսումնական հաստատությունների աշակերտներ և ուսանողներ, ՀՀ կուսակցությունների երիտասարդական թևերի ներկայացուցիչներ, ՀՀ-ում ԱՊՀ երկրների դիվանագիտական ներկայացուցիչներ, Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր այրեր և այլոք:

Ակցիայի նպատակն է՝ պահպանել յուրաքանչյուր ընտանիքում Հայրենական Մեծ պատերազմի մասնակից բարեկամ վետերանների մասին հիշողությունը և ապահովել սերունդների հաջորդականությունը:

1517887

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱԿՏՈՍՏԱՍԱՇԻՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԱՆ
ԲԱՅԱՆԴԱԿ ԹՈՒՂԹ
19/3446

Պարոն Մարության, հրավիրում ենք Ձեզ և քաղաքապետարանի բոլոր աշխատակիցներին մասնակցել «Անմահ գունդ» խորագրով քայլերթին:

Քայլերթը կմեկնարկի 2019թ. մայիսի 9-ին, «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահի շենքից՝ Արամ Խաչատրյանի հուշարձանի մոտից, ժամը 13:00-ին, որից հետո քայլերթը կանցնի Մաշտոցի պողոտայով, Ամիրյան փողոցով դեպի Հանրապետության Հրապարակ, որտեղ պտույտ կկատարվի, այնուհետև՝ Վազգեն Սարգսյան փողոցով դեպի Կիրովի անվան այգի, որտեղ ժամը 15:00-ին ծաղիկներ կդրվեն Նելսոն Ստեփանյանի արձանի մոտ:

Կարգադրիչների թիվը՝ 10 հոգի, միջոցառման ղեկավար՝ «Հայաստանի Անմահ գունդ» հայրենասիրական հասարակական կազմակերպության նախագահ Գոհար Ղումաշյան, հեռ. 091 57 54 54:

Խնդրում ենք նաև «Անմահ գունդ» խորագրով քայլերթի համար տրամադրել ՀՀ դրոշներ, 100 հատ:

Բացի այդ՝ պարոն Մարության, վերոնշյալ միջոցառման և այլ հարցերի քննարկման համար ցանկանում եմ անպայման հանդիպել անձամբ ձեզ հետ: Խնդրում եմ նշանակել կոնկրետ օր և ժամ:

Հարգանքով՝
«Հայաստանի Անմահ գունդ»
ՀԿ նախագահ

Գոհար Ղումաշյան